ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Սպորտում վեճերը նույնքան խաղի մասն են, որքան հաղթանակի պատճառած բերկրանքն ու պարտության հարուցած հուզմունքը: Վեճեր կարող են առաջանալ մրցակցության ցանկացած մակարդակում՝ խաղացողների և մարզիչների միջև վեճերից մինչև պայմանագրերի և հովանավորության գործարքների շուրջ տարաձայնություններ՝ սպառնալով խախտել հաջողության համար կարևոր ներդաշնակությունը:

Սպորտային հաշտարարությունը միջազգային պրակտիկայում այնքան էլ նորամուծություն չէ: Սպորտային արբիտրաժային դատարանը (CAS) սպորտի բնագավառում հաշտարարության ծառայություններ առաջարկում է 1994 թվականի մայիսի 1-ից ի վեր: Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել, որ ֆուտբոլային արդյունաբերությունում հաշտարարությունը վերջին տարիներին հատկապես գրանցում է հեղափոխական դինամիկայով աճ: 2023 թվականի փետրվարին ՖԻՖԱ-ն հրապարակեց իր հաշտարարության ուղեցույցները, որը կարելի է համարել նշանակալի ձեռքբերում սպորտային հաշտարարության ինստիտուցիոնալացման գործընթացի համատեքստում:

ՖԻՖԱ-ի ուղեցույցների համաձայն՝ հաշտարարներին վստահվում են բազմաթիվ գործառույթներ: Նախ, հաշտարարները օգնում են ներգրավված կողմերին բացահայտելու վեճի հիմքում ընկած հիմնարար խնդիրները, ապա՝ խրախուսում կառուցողական քննարկումները կողմերի միջև՝ ուղղորդելով դեպի հնարավոր լուծումներ:

ՖԻՖԱ-ն մինչ այժմ հաջողությամբ իրականացրել է 12 հաշտարարության գործ:

Սպորտային հաշտարարության էությունը

Ընդունված է համարել, որ սպորտի բնագավառում ծագող վեճերի լուծումը պայմանավորված է դատավորի կամ արբիտրի կայացրած վճռից, որն ըստ էության կողմերից մեկին ճանաչում է հաղթող, իսկ մյուսին՝ պարտված:

Ավանդաբար ընդունված այս մոտեցումը, որպես կանոն, զգալի ժամանակ և ռեսուրսներ է խլում վիճող կողմերից, իսկ վերջնարդյունքում հանգեցնում ներգրավված կողմերի միջև ապագա համագործակցության հեռանկարների վտանգման:

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնն առաջարկում է սպորտի բնագավառում ծագող վեճերի լուծման առավել ծախսարդյունավետ, արագ և հուսալի տարբերակ՝ ի դեմս սպորտային հաշտարարության: Ընտրելով սպորտային հաշտարարությունը՝ կողմերը կարող են հեշտությամբ գալ ընդհանուր հայտարարի նույնիսկ ամենաբարդ թվացող գործերում, որոնց ներգրավված են բազմաթիվ շահագրգիռ կողմեր: Սպորտային հաշտարարությունը կողմերին հնարավորություն է տալիս հաշվի առնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են շարունակական համագործակցությունը և ֆինանսական շահեկանությունը:

Սպորտային հաշտարարությունը նախապատվություն է տալիս վեճերի կարգավորման այն բանաձևերին, որոնք արտացոլում են ներգրավված բոլոր կողմերի կարիքներն ու շահերը: Սպորտային հաշտարարության շրջանակներում հիմնական շեշտադրումը դրված է փոխադարձ շահերին ծառայող լուծումների փնտրտուքի վրա:

Այսպիսով, սպորտային հաշտարարությունն առաջարկում է արդյունավետ հարթակ, որտեղ կողմերը կարող են լուծել իրենց վեճերը՝ կենտրոնանալով կառուցողական արդյունքների վրա: Ինչպես մյուս ոլորտներում, սպորտային վեճերի լուծման գործընթացում ևս հաշտարարությունը գրանցել է ուշագրավ արդյունավետություն ՝ ավելի քան 75% հաջողությամբ:

Սպորտային հաշտարարության առանձնահատկությունները

Սպորտային հաշտարարը, որպես կանոն, սպորտային իրավունքի և վեճերի լուծման բնագավառում մասնագիտացված գիտելիքներ ունեցող անհատ է: Օրինակ, ֆուտբոլային ակումբի և խաղացողի միջև հակասությունների դեպքում, ֆուտբոլային արդյունաբերության ոլորտային իմացությամբ մասնագետը, ծառայեցնելով իր համապարփակ գիտելիքները՝ կառաջարկի կողմերի համար համակողմանիորեն ընդունելի լուծումներ: Հաշտարարները մասնագիտացած են հաշտարարության տեխնիկայի մեջ և այդկերպ արդյունավետորեն կարողանում են նպաստել վեճի կողմերի միջև երկխոսությանն ու բանակցություններին:

Սպորտային հաշտարարությունն առաջարկվում է նշված իրավիճակներում.

- **Խաղացող-մարզիչ վեճեր.** մարզիկների և մարզիչների միջև վեճերն ու հակասությունները սովորական երևույթ են սպորտի մրցակցային միջավայրում: Անկախ նրանից, թե դա խաղաժամանակի, մարզումների մեթոդների և մարտավարության, թե անձնական հարցերի շուրջ տարաձայնություններ է, այդ վեճերը հաճախ խաթարում են թիմային աշխատանքը:

- **Պայմանագրի շուրջ բանակցություններ.** խաղացողների հետ պայմանագրերի կնքումը և հովանավորության վերաբերյալ գործարքները հաճախ ներառում են բարդ ֆինանսական և իրավական ասպեկտներ: Հաշտարարությունը կարող է օգնել կողմերին ավելի արդյունավետ կերպով վարել պայմանագրի կնքման շուրջ բանակցությունները և ձեռք բերել փոխշահավետ պայմանավորվածություններ:

- **Կարգապահական խնդիրներ.** երբ մարզիկները կամ թիմի պաշտոնյաները բախվում են կարգապահական հարցերի՝ տարբեր հանգամանքներում դրսևորված ոչ իրավաչափ վարքագծի առնչությամբ, հաշտարարությունը կարող է ապահովել արդար և թափանցիկ լուծումներ: Սա կարող է հատկապես արժեքավոր լինել այն դեպքերում, երբ լուրջ տարաձայնություններ կան փաստերի և հաշվետվողականության հարցերի շուրջ:

Դոպինգային սկանդալներ. դոպինգի կամ թմրամիջոցների մասին խոսակցությունները սովորաբար լրջորեն ազդում են մարզիկների կարիերայի հետագա ընթացքի վրա: Ավելին, այս միջադեպերը կարող են վնասակար լինել նաև մարզական կազմակերպությունների գործունեության համար: Հաշտարարությունը կարող է առաջարկել գաղտնի և անկողմնակալ գործընթաց այսօրինակ մեղադրանքների առնչությամբ ծագող վեճերի լուծելու համար՝ ապահովելով պատշաճ ընթացակարգերի պահպանում և ներգրավված կողմերի հեղինակության պաշտպանություն:

Սպորտային հաշտարարության առավելությունները

Սպորտային հաշտարարության աճի դինամիկան կարելի է պայմանավորել դրա ընձեռած հիմնական առավելություններով: Դրանք են՝

1. **Գաղտնիություն.** Ի տարբերություն դատական վարույթի՝ հաշտարարությունն առաջարկում է գաղտնի միջավայր, որտեղ կողմերը կարող են քննարկել զգայուն հարցեր՝ չվախենալով հանրային վերահսկողությունից: Սա կարող է խրախուսել կողմերի առավել բաց հաղորդակցությունը՝ նպաստելով բովանդակալից և տևական լուծումների:

2. **Ճկունություն.** հաշտարարությունը ճկուն գործընթաց է, որը կարող է հարմարեցվել կողմերի հատուկ կարիքներին և նախասիրություններին: Այս չափանիշը թույլ է տալիս ձևավորել յուրահատուկ լուծումներ, որոնք շատ հաճախ անհնարին է ձեռք բերել ավանդական իրավական գործիքների միջոցով:

3. **Հարաբերությունների պահպանում.** մարզիկների, մարզիչների, ակումբների և այլ շահագրգիռ կողմերի միջև դրական հարաբերությունների պահպանումը կարևոր է երկարաժամկետ հաջողության համար: Հաշտարարությունն առաջնահերթություն է տալիս լուծումներին, որոնք նվազագույնի են հասցնում հարաբերությունների խաթարման վտանգը:

4. **Կողմերի ինքնավարություն.** Հաշտարարության գործընթացում վիճող կողմերն ակտիվորեն նպաստում են վերջնարդյունքին:

5. **Ծախսարդյունավետություն**. դատավարությունը կարող է լինել ժամանակատար և, հետևաբար, ծախսատար գործընթաց՝ առանց բավարար արդյունքի երաշխավորման: Ի հակադրություն սրա՝ հաշտարարությունն ավելի արագ է և զերծ ֆորմալ ընթացակարգերից, ինչը այն դարձնում է սպորտային վեճերի լուծման գրավիչ եղանակ:

Եզրակացություն

Սպորտային հաշտարարությունն արժեքավոր գործիք է սպորտի բնագավառում ծագող հակասությունների և վեճերի լուծման համար: Խթանելով համագործակցությունը, հարաբերությունների հետագա պահպանումը և ավանդական իրավական գործընթացներին ճկուն և ծախսարդյունավետ այլընտրանքը՝ հաշտարարությունն օգնում է պահպանել արդարության, արդար խաղի և մարզական վարպետության սկզբունքները, որոնք ընկած են մրցակցային աթլետիկայի հիմքն են:

+374 11 201 410

info@amca.am

51 Arshakunyats Ave., area 47, Yerevan, Armenia

Sources: Ian Blackshaw, *Sport, Mediation and Arbitration*, (2009 ASSER)

Mark Grabowski, (2014) Both Sides Win: Why Using Mediation Would Improve Pro Sports, Harvard *JSEL* Vol. 5. Vol.5(2), pp.189-214.

Mordehai Mironi (2017), The promise of mediation in sport-related disputes. *Int Sports Law J* 16, 131–154.

Christopher W. Moore, *The Mediation Process: Practical Strategies for Resolving Conflict* (4th ed Jossey-Bass).

John M. Haynes, *The Fundamentals of Family Mediation,* (State University of New York Press).